

դում է Դազար Փարպեցին, միայն այն տարբերութեամբ, որ առաջին երկու պատմագրերը վերագրում են ս. Մեսրոպին բոլոր հայկական գրերի գիւտը, իսկ Դազար Փարպեցին տրամադիր է Մեսրոպին վերագրելու նախնի հայոց նշանագրերի մշակումն և լրացումը:

Այսահեղ արդէն, ինքն ըստ ինքեան տռաջ է գտվու հետեւալ կարեսը հարցերը. առաջին՝ թէ արդեօք Մեսրոպից առաջ եղել է հայոց գիր. երկրորդ՝ եթէ հայոց գիր հղած չէ, արդ' օք հայերը գոնէ օգտաել են հարեան աւելի կուլտուրական ազգերի՝ յունաց, ասորոց կամ պարսից գրութիւններով հայոց լուսով գրելու համար:

Այն նիւթերը, որ մեզ մատակարարում են մեր նշանաւոր պատմագրերը Ագաթանգեղոսից սկսած մինչեւ Դազար Փարպեցին լեփ—լիցուն են կրօնական կամ պատերազմական անցուդարձերով և շատ քիչ բան են տալիս հետաքրքիր լնթերցովն մեր նախնիքի զուտ կուլտուրական կեանքի վերաբերմամբ:

Եթէ գուք ցանկանում էք նախնիների կեանքի մի կողմը լուսաբանել ժամանակակից պատմակուլտուրական հայեցակետով, գուք միանգամայն մնում էք ձեռնաթափ ու կամայ ակամայ գիւտում էք այս ու այն ենթագրութիւնների. մի մեթոդ, որ յամենայն դէպսիստական համարել չի կարող:

Երբ գուք ուշի ուշով թերթում էք Փաւստոս Բիւզանդացրներ կան, որ հայ լեզւի փոքր իշտոէ ճաշակ ունեցողը վերջնականապէս կգայ այն եղանակայ գալիս էք այն եղանակացութեան, որ գիրքը գրւած է եղել հայերէն և ոչ թէ յունարէն ու յիսոյ հայերէն թարգմանւած. ինչպէս որ առասարակ լնդունւած է կարծել\*):

Փաւստոս Բիւզանդի մէջ այնքան հայ ժողովրդական գարձւացքներ կան, որ հայ լեզւի փոքր իշտոէ ճաշակ ունեցողը վերջնականապէս կգայ այն եղանակայ գալիս էք այդ գիրքը սկզբից մինչեւ վերջը գրւած է բուն հայ մարդու, ժամանակակից խօսակցալան ու գրականական հայերէնին լաւ տիրապետող մի անձնաւորութեան ձեռքով, չնայելով՝ որ այդ անձնաւորութիւնը օտարի անուն է կոռում իւր վրա կամ թագւած է օտարի անուն տակ:

Նոյնը կարելի է ասել և Ագաթանգեղոսի մասին, որ իւր երկը գրել է մեր գրերի գիւտից աւելի քան հարիւր տարի առաջ: Լատին Ագաթանգեղոսը հաւանական ենթանլութեամբ լատիներէն կամ յունարէն պիտի գրած լինէր իւր երկը, բայց ոչ լատիներէնի և ոչ էլ յունարէնի մէջ չկան այն տառերը, որովով այնքան հարազատ ճշտութեամբ գրւած են այդ գրւածքում եղած բագմաթիւ հայկական տշխարհագրական և այլ յատուկ անունները:

Միւս կողմից երբ գուք կարդում էք եղիշէն և եզնիկը, կարդում էք ս. Սահակի ձեռքով թարգմանւած Աստվածաշունչ գիրքը, գուք հիացած և սքանչացած լեզւի նրբութեամբ և հարստութեամբ, կամայ, ակամայ գալիս էք այն եղանակացութեան, որ հայ գրերի գիւտից առաջ հայ լեզւով պիտի եղած լինէր մի շատ ծաղկած և մարթամ գրականութիւն. թէ ո՞ր գրութեամբ, հին հայերէն տառերով արդեօք, թէ հարեան ազգերի տառերով, այդ մնում է արդէն հանելուկ:

\*.) Ծանօթ. Այս և նման խորհրդածութիւնները կատարելիս, մինք մեր նախնի մատենագրներին ընդունումնք վաեր, ճշմարտապատում ու իւրաքանչիւրին իւր ժամանակագրական յատուկ վայրերում:

## ՆԱԽՆԻ ՀԱՅՈՑ ԳՐԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐԶԸ:

Երկու ականաւոր պատմագրեր՝ Սքանչելի կուրիւնը և պատմահայր Խորենացին իրեն ժամանակակիցներ, Մեսրոպի և Սահակի անմիջական յառաջաղէմ աշակերտներ, մանրամասն աւանդում և նկարագրում են մեր գրերի գիւտի բոլոր հանգամանքները, այնպէս որ մեզ մնում է միայն ամենամեծ երախտագիտութեամբ ընդունել նրանց հազորդածները իրեն զուտ պատմական ճշմարտութիւնները, որովհետեւ ականաւեսների պատմածների մասին կառկածանքը արդէն անարժան քննամոլութիւն կլինէր:

Կորիւնի և Խորենացու աւանդածները ամբագն-

Աստւածաշնչի թարգմանութիւնը կատարւում է անմիջապէս զրերի գիւտից յետոյ, մինչև Եղնիկը նոյնապէս շատ տարիներ չի անցնում: Մինչև Եղիշէն, Խորենացին ու Դազար Փարապեցին անցնում է մի քանի տասնեակ տարիներ միայն և այդ մարդիկ տալիս են մեզ կատարելապէս մշակւոծ, սքանչելի լեզով գրութիւններ: Եղնիկի ու Եղիշէնի լեզուն ունենալու համար, այն էլ այն ժամանակւայ պայմաններում, երբ գիրքը գրւում ու կարդացւում էր շատ սահմանափակ շրջաններում—մենաստանների ու վանքերի պարփակների մէջ—հարկաւոր կլինէր դարերի մշակումն:

Կլասիկական յօւնաբէնն ու լատիններէնը նոյնապէս և նորագոյն լեզուները՝ ֆրանսերէնը, զերմաններէնը ուսւուրէնը մինչև իրենց ծաղկման ներկայ աստիճանը, դարերի մշակման բովով անցան:

Մեր նոր զրականուկան լեզուն, աշխարհաբարը, չնայիլով, որ աշակերի քան հարիւր տարւայ մշակման ընթացք ունի, չնայիլով իւր ծաղկման անհամեմատ աւելի յաջող պայմաններին, դեռ ևս շատ հեռու է իւր զարգացման գագաթնակէտին հասնելուց:

Անօրինակ և զարմանալի երևոյթ: Եւ իսկապէս տէք քուրդի, ալլանացու, կամ չերքեղի ձեռքը սեպհական ազգային զիր և ի՞նչ էք կարծում, այդ ազգերը, իսկոյն, մի քանի տարիների, ասինք նոյն իսկ մի քանի տասնեակ տարիների ընթացքում ընդունուկ կլինէին այդպիսի ճոխ, հարուստ և փարթամ լեզով երկեր տալու, ինչպէս հինգերորդ դարից մնացած գրութիւնները:

Ի հարկէ ոչ:

Ուրիմն չնայիլով պատմական դրական փաստերի բացակայութեան, մենք դրականապէս զալիս ենք այն եղրակացութեան, որ մինչև Սահակն ու Մեսրոպը, մինչև մեր զրերի գիւտը, հայոց մէջ գոյութիւն է ունեցել շատ լայն չափով, մի կամ նոյն իսկ գուցէ մի քանի, դրականական շրջաններ, որոնց ընթացքում հայոց լեզուն այնքան բարձր զարգացման է հասել որպիսին մենք տեսնում ենք զրերի գիւտից անմիջապէս յետոյ Սահակի, Մեսրոպի, Եղնիկի, Եղիշէնի, Խորենացու, Դազար Փարապեցու և այլոց երկերի մէջ, Նախնի հայոց դրականութեան ու լեզուի մասին մենք ենթադրում ենք հետեալը.

Դեռ Քրիստոսից մի քանի դար առաջ և առ սակաւը Արշակունիաց մուտքից անմիջապէս յետոյ, Հայաստանում սկսում է հայոց լեզուի ու գրականութեան մշակումը, հաւանականաբար սեպհական զրով, որ զնալով զարգանում է մինչև քրիստոնէութեան մուտքը Հայաստանում:

Պարթևական լեզուի և հայոց արարատեան բարբարի խառնուրդից կազմում է սատանիկ քաղցրահնչիւն պետական լեզու-դրաբարը, որ հետզհետէ ճոխանում է ու զարգանում հայոց արքունի պաշտօնական ու դիւանական գործերում. քրմական շրջաններում, մենանական մատեաններում, զրանց գալուցներում ու զարեաններում, նախարարական ընտանիքներում, վաճառաշահ բազմամարդ կենցրունական քաղաքներում ու ազգային անգիր բանաստեղծութիւններում (փիպաններ) և այս շրջանը տեսում է մինչև քրիստոնէութեան մուտքը Հայաստան:

Մուտք է զործում քրիստոնէութիւնը—անկառակած անհամեմատ մի աւելի բարձր կուլտ քան հեթանոսութիւնը, բայց քրիստոնէութեան մուտքը Հայաստանում կատարւում է բազմահարիւր օտար՝ յոյն և ասօրի կրօնաւորների արշաւանքով, որոնք անխնայ

կործանում ու հարւածում են այն բոլորը, ինչ որ կապ ունէր կոապաշտական կրօնի և նրա արարողութիւնների հետ: Կործանելով հայոց հեթանոսական միհեանները, հեթանոսական զպլոցները, այրելով ու ոչնչացնելով միհեանական գրւածները, հալածելով ու կոտորելով բրմական դասը, միենոյն ժամանակ մի անրութելի հարւած են հասցնում նախնի հայ լեզուն ու զպլութեանը:

Հայ լեզուն հալածւում է նոր կրօնի միջից, իրը կոապաշտական արարողութիւնների հետ շաղկապւած մի լեզու և նրա փոխանակ սկսում են թագաւորի յոյն և ասօրի լեզուները. կամաց, կամաց զործածութիւնից դուրս է գցւում և հայ գիրը:

Բայց հայ լեզուի վատրումը կիեղեցուց, դեռ չէր նշանակում նրա խպատ սէնչացումը: Աստանիկ լեզու զրաբարը զիս շարունակում է թագաւորել արքունիքում, նախարարական շրջաններում, բազմամարդ կենտրոնական քաղաքներում, անգիր բանաստեղծութիւնների, վիպասանութիւնների մէջ, որոնք ընդարձակ ծաւալ ունէին Հայաստանում: Բայց ամենից աւելին քարոզների մէջ, ուր հոգևորականութիւնը արգեն ակամայ ստիպւած էր մայրենի լեզու զործածել, այնպէս որ օտար հոգևորականներից շատերը ստիպւած էին հայերէն սովորել:

Բայցի դրանից հալածւած քրմական դասակարգը ապաւինում է երկրի լեռնոտ մասերում (Փողթն, Սիւնիք և այլն) տանելով իւր հետ հայ լեզուն ու զպլութիւնը:

Սակայն օտարի լեզուն երկար տիրապետել չը պիտի կարողանար. քրիստոնէութիւնը կործանելով նախկին կոապաշտական զպլոցները, նրանց փոխանակ հաստատեց իւր սեպհական զպլոցները, ուր սովորում էին հարազատ հայ մանուկներ: Շատ բնական է, որ զուտ հայկական զպլոցական սիրունզը աճելով հաշտ աչքով չպիտի մտիկ անէր օտար բռնաւորներին, մանաւանդ որ այդ աշակերտութիւնը միծ մասամբ նախկին քրմական դասակարգի զաւակներիցն էր:

Ենթադրելի է, որ օտար լեզուների դէմ անտագոնիզմը սկսւեց զիս Մեսրոպից շատ առաջ, զնալով հետզհետէ այդ յարաբերութիւնները լարման զագաթնակէտին հասան և Մեսրոպի ժամանակ մայրենի լեզուի ու սեպհական զրի զործածութեան փափազը արգէն զարձաւ մի համազգային հրամայողական պահանջ, որին այնքան յաջող ու գեղեցիկ լրացում տւին անզուգական Մեսրոպն ու Սահակը:

Խ. ԴԱՄԱՐԵԱՆ

